ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզպետի 07.07.2011թ թիվ 63 կարգադրությամբ ստեղծված «Գենդերային հարցերով զբաղվող» Շիրակի մարզային հանձնաժողովի 2015թ.առաջին նիստի

27.03.2015թ.

Մասնակցում էր հանձնաժողովի 8 անդամ

1. **Օրակարգ 1. Ամուսնալուծությունները, դրանց հիմնական պատճառները, գենդերային գործոնները**
2. **Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները քսան տարվա կտրվածքով 8 հիմախնդրային ոլորտների վերաբերյալ**
3. **2014թ ապրիլի 7 - 2015թ ապրիլի 7 <<Ընտանիքի տարի>> - կատարված աշխատանքների վերաբերյալ**
4. **Քննարկում**
5. **Այլ հարցեր**

1. Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահ, մարզպետի տեղակալ Հ. Արշակյանին, ով ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց օրակարգի հարցերը: Օրակարգը հանձնաժողովի անդամների կողմից հաստատվեց միաձայն:

2. Լսեցին՝ Հանձնաժողովի անդամ Լիլիթ Գորգինյանին, ով ներկայացրեց ամուսնալուծությունների հիմնական պատճառները, դրանց բացասական հետևանքները և գենդերային գործոնները:

3. Լսեցին՝ Հանձնաժողովի անդամ Լուսինե Գինոսյանին, ով ներկայացրեց Պեկինի հռչակագրի իրականացման արդյունքները:

4. Լսեցին՝ հանձնաժողովի նախագահ Հ. Արշակյանին, ով խոսեց Ընտանիքի տարվա միջոցառումների ժամանակացույցի կատարման մասին:

Արտահայտվեցին՝ 1. Գայանե Կարապետյանը

Նա խոսեց այն մասին, որ այսօր ամուսնանում են հիմնականում չմտածելով ընտանիք կազմելու պատասխանատվության մասին, պատկերացումները ընտանեկան ու ամուսնական պարտականությունների մասին խիստ մակերեսային են: Արդյունքում

ամուսնալուծությունների թիվն աճել է, և ցավոք սրտի քաղաքակիրթ մոտեցումը ցածր տոկոս է կազմում հետամուսնական հարաբերությունների, երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու խնդիրների լուծման մեջ:

2. Հայկուշ Ավետիսյանը

Նա նշեց, որ անհրաժեշտ է երկու սեռերի համար ողջ կյանքի ընթացքում մատչելի և բարձրորակ ծառայություններից օգտվելու հնարավորությունները ընդլայնել, ամրապնդել կանխարգելող ծրագրերը:

3. Թերեզա Գրիգորյանը

Նա խոսեց ՀՀ օրենսդրության մեջ կատարված զգալի փոփոխությունների մասին, սակայն հավելեց, որ դա դեռևս բավարար արդյունք չէ: Անհրաժեշտ է անցկացնել գենդերային փորձաքննություն՝ մինչ օրենքի ընդունումը:

4. Ամալյա Ադամյանը

Նա նշեց, որ անհրաժեշտ է խրախուսել կանանց տնտեսական իրավունքները, ապահովել աշխատանքի պատշաճ պայմաններ, աջակցել ռեսուրսների, աշխատատեղերի հավասար մատչելիությանը:

5 Սամվել Գրիգորյանը

Նա ասաց, որ ՋԼՄ-ների դերը խիստ կարևոր է գենդերային հավասարության գաղափարի պաշտպանության և առաջմղման համար: Կնոջ հավասարակշռված և ոչ կարծրատիպային կերպարի ստեղծմանը պետք է աջակցեն ՋԼՄ-ները:

6 Լուսինե Գինոսյանը

Նա հիշեցրեց, որՀՀ կառավարության կողմից հայտարարված ընտանիքի տարին մոտենում է ավարտին և կատարված միջոցառումները և իրականացված աշխատանքները պետք է ներկայացվեն ՀՀ Կառավարություն:

Նիստը որոշեց.

1. Ծանոթանալ <<Պեկինի գործողությունների ծրագրի, հազարամյակի զարգացման նպատակների, կանանց քաղաքական իրավունքների մասին

ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման ընթացքին Հայաստանի Հանրապետությունում>> երեք հիմնական հանձնարարականների դիտարկմանը և գնահատմանը:

2. Ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին՝ ըստ ոլորտների, ընտանիքի տարվան նվիրված ծրագրի հաշվետվության մեջ ներառելու նպատակով՝ մինչև ս/թ ապրիլի 3-ը:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Արշակյան

Քարտուղար՝ Լ. Գորգինյան